

U 24.01.03
Ա-79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԵԼՅԱ ԱՐՇԱԿԻ

ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ
ՀԱՐԹԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ

Իդ.01.03 «Ընդհանուր երկրաբանություն, հիդրոերկրաբանություն,
ճարտարագիտական երկրաբանություն» մասնագիտությամբ
երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Ս Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2012

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АВЕТИСЯН ОФЕЛЯ АРШАКОВНА

ВЛИЯНИЕ ГИДРО-ГЕОЛОГИЧЕСКИХ УСЛОВИЙ НА
МЕЛИОРАТИВНОЕ СОСТОЯНИЕ ЗЕМЕЛЬ АРАРАТСКОЙ РАВНИНЫ И
ПУТИ УЛУЧШЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата геологических наук по
специальности 24.01.03 – “Общая геология, гидрогеология, инженерная
геология”

ЕРЕВАН - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժ.Ա.Աջոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Երկրաբանա-հանքաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Բ.Յ.Սարգսյան
Երկրաբանա-հանքաբանական գիտ. թեկնածու Գ.Ս.Թորոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2012 թվականի մայիսի 24-ին, ժամը 14³⁰
Երևանի պետական համալսարանում գործող 005 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է՝ 2012 թվականի ապրիլի 23-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
Երկրաբանա-հանքաբանական գիտ.թեկնածու, դոցենտ՝


Վ.Ա.Գրիգորյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:
кандидат технических наук, доцент Ж.А.Ачоян

Официальные оппоненты:
доктор геолого-минералогических наук, профессор О.А.Саркисян

кандидат геолого-минералогических наук Г.С.Торосян

Ведущая организация:
Институт водных проблем и гидротехники имени академика И.В.Егнazarова

Защита диссертации состоится 24 мая 2012 года в 14³⁰ часов на заседании


Специализированного совета 005 Ереванского государственного университета

Адрес: 0025, Ереван, ул.Алека Манукяна, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 23 апреля 2012 года

Ученый секретарь Специализированного совета,
кандидат геолого-минералогических наук, доцент


Մ.Ա.Գրիգորյան



2374-2012

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի արդիականությունը

Հայաստանի Հանրապետությունում բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նախադրյալներից է հանդիսանում ջրային և հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում բնական ռեսուրսները խիստ սահմանափակ են, նշված խնդրի կարևորությունն ավելի է ընդգծվում տեխնիկական առաջընթացի և մարդու տնտեսական գործունեության ազդեցության մեծացման պայմաններում: Հատկապես վերաբերում է Արարատյան արտեզյան ավազանի հարթավայրային մասին, որը հանդիսանում է հանրապետության տնտեսապես զարգացած և ամենախիտ բնակեցված տարածքը: Այստեղ անթրոպոգեն գործոնի ինտենսիվ ազդեցության պայմաններում ջրային և հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանության խնդիրը եղել է և կմնա ամենաարդիականը: Այդ իսկ պատճառով, հարթավայրի ոռոգելի հողերի գիտականորեն հիմնավորված մելիորացիան կհանգեցնի հողերի բերքատվության աճին, բացառելով բնատարածքային համալիրների, այդ թվում նաև ժամանակակից մելիորատիվ լանդշաֆտների վրա բացասական ազդեցությունները:

Աշխատանքի նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է կատարել Արարատյան հարթավայրի հորիզոնական դրենաժային համակարգի ազդեցության տիրույթում ընկած ոռոգելի հողատարածքներում գրունտային ջրերի մակարդակի դինամիկայի և հանքայնացման աստիճանի կանխատեսում և դրանց արդյունքների հիման վրա գրունտային ջրերի ռեժիմի կարգավորման միջոցառումների մշակում:
Դրված նպատակին հասնելու համար աշխատանքում լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

1. Ուսումնասիրվել և ընդհանրացվել են Արարատյան արտեզյան ավազանի ջրային և հողային ռեսուրսների ձևավորումը բնութագրող բնական գործոնները:
2. Տրվել է ստորերկրյա ջրերի ջրաաղային ռեժիմի ձևավորման պայմանների ընդհանուր բնութագիրը՝ բնական պայմանների և իռիգացիոն-տնտեսական գործոնների վերլուծության հիման վրա:
3. Գնահատվել է գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման բազմատարյա փոփոխությունը:
4. Գնահատվել է ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի փոփոխության ուղղվածությունը գրունտային ջրերի ռեժիմի ազդեցության պայմաններում:
5. Կատարվել է գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման հնարավոր փոփոխությունների կանխատեսում մելիորատիվ միջոցառումներ իրականացնելու դեպքում:
6. Մշակվել են Արարատյան հարթավայրի գրունտային ջրերի ռեժիմի կարգավորմանն ուղղված միջոցառումներ՝ ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտ է հանդիսանում Արարատյան հարթավայրը, իր ջրաերկրաբանական, բնական-գյուղատնտեսական տարածքային համալիրների առանձնահատկություններով: Հետազոտության առարկան է Արարատյան հարթավայրի ոռոգելի հողատարածքներում գրունտային ջրերի (ջրային և աղային) ռեժիմի ձևավորման օրինաչափությունները՝ հորիզոնական դրենաժի ֆոնի վրա:

Աշխատանքի մեթոդական հիմքը

Աշխատանքի իրականացման համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել ֆիլոսոֆիայի և նյութի տեղափոխման տեսության վերաբերյալ աշխատությունները և այդ ուղղությամբ գործող մեթոդական և նորմատիվային ուղեցույցները:

Ուսումնասիրության մեթոդիկական հիմնված է ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումների տվյալների, ինչպես նաև ջրադինամիկական և ջրաքիմիական գործընթացների, դրանց ցուցանիշների փորձարարական որոշումների ու տեսական ուսումնասիրությունների արդյունքների վրա: Աշխատանքում կիրառվել են քարտեզագրական, երկրատեղեկատվական ժամանակակից մեթոդներ: Ուսումնասիրության արդյունքների մշակումն ու կանխատեսումային հաշվարկները կատարվել են վերլուծական և հաշվեկշռային մեթոդներով:

Աշխատանքում օգտագործվել են «Մելիորացիա» ՓԲԸ, «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան» ծրագրի շրջանակներում կատարված հետազոտական աշխատանքների և նախկին տարիներին կատարված աշխատանքների արխիվային նյութերը:

Աշխատանքի գիտական նորությունները

1. Կազմվել են Արարատյան հարթավայրի գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման բազմատարյա փոփոխությունների տարածաժամանակային գրաֆիկներ և քարտեզներ:
2. Առաջարկվել է հարթավայրի հորիզոնական դրենաժների ազդան տիրույթում գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման փոփոխությունների գնահատման մեթոդիկա:
3. Գնահատվել է հորիզոնական դրենաժային համակարգի աշխատանքի արդյունավետությունը գրունտային ջրերի ռեժիմի կարգավորման տեսանկյունից:

Պաշտպանվող հիմնական դրույթները

1. Որոշված և հիմնավորված են Արարատյան հարթավայրի գրունտային ջրերի ռեժիմի փոփոխության օրինաչափությունները:
2. Կանխատեսված է գրունտային ջրերի մակարդակի դինամիկական ֆիլտրացիոն դիմադրությունների մեթոդով:
3. Կանխատեսված է գրունտային ջրերի հանքայնացման աստիճանը և գնահատված է ջրի որակը ոռոգման նպատակներով:
4. Հիմնավորված են գրունտային ջրերի ռեժիմի կարգավորմանն ուղղված միջոցառումներ:

Աշխատանքի կիրառական նշանակությունը

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել մելիորացիայի, ջրատնտեսական շինարարության և ոռոգելի հողագործության բնագավառներում, ինչպես նաև ոռոգման համակարգերի, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով դրենաժային համակարգերի նախագծման, շինարարության և շահագործման ժամանակ:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, տասնյոթ ենթագլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից (126 աղում), հավելվածների բաժնից: Աշխատանքի ծավալը կազմում է 141 էջ, որտեղ

տեղակայված են 14 աղյուսակ և 24 նկար, որից 6-ը քարտեզներ են, 6-ը՝ սխեմա և 12-ը՝ գրաֆիկ:

Աշխատանքի արդյունքների տպագրումը և քննարկումները

Աշխատանքի հիմնական դրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի ընդլայնված նիստում, զեկուցվել ու հրատարակվել են ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տարբեր տարիներին կայացած գիտական կոնֆերանսների հոդվածների ժողովածուներում (2004թ, 2006թ, 2007թ, 2008թ, 2011թ), ԵՊՀ գիտական տեղեկագրում (2006թ): Աշխատանքի վերաբերյալ հրատարակվել է 7 գիտական հոդված:

Երախտագիտություն

Խորին երախտագիտությունս են հայտնում իմ գիտական ղեկավարներ, անվանի գիտնական պրոֆ. Վ.Ա.Ավետիսյանին, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Մ.Ալեյանին խնդրի դրվածքի, օգտակար խորհուրդների և աշխատանքի նկատմամբ մշտական ուշադրության համար:

Շնորհակալությունս են հայտնում ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին աշխատանքի կատարման ընթացքում ցուցաբերած օգնության և օգտակար խորհուրդների համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆՂՎՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, լուծված խնդիրների գիտա-գործնական անհրաժեշտությունը և նշանակությունը, բերված են ատենախոսության հիմնական դրույթները:

Առաջին գլխում ներկայացված են Արարատյան հարթավայրի ջրային և հողային ռեսուրսների որակական և քանակական բնութագրերը, վերլուծվել է հարթավայրի ստորերկրյա ջրային ռեսուրսների օգտագործման և ոռոգելի հողերի արդի մելիորատիվ վիճակը: Այս գլխում անդրադարձվել է նաև հարթավայրի ընդհանուր էկոլոգիական վիճակի հարցերին:

Հայաստանի Հանրապետության ստորերկրյա ջրերի ռեսուրսների գերակշռող մասը (շուրջ 70%) ձևավորվում է Արարատյան ատեյան ավազանի սահմաններում (ԱԱԱ), և լայնորեն օգտագործվում է ինչպես խմելու և արդյունաբերական ջրամատակարարման, այնպես էլ ոռոգման նպատակներով: Ներկայումս ստորերկրյա ջրերի ռեսուրսների օգտագործման ռեժիմը չի կառավարվում, տիրում է լիակատար քաոսային վիճակ, ինչը բերում է ստորերկրյա ջրերի պաշարների սպառման, նրանց հանքայնացման մեծացման և ճնշումների կորստի: Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ տեղի է ունեցել ուժեղ ճնշումային ջրատար հորիզոնի, ինչպես նաև ԱԱԱ ջրաճնշումային համակարգի այնպիսի մակարդակի անկում: ԱԱԱ ճնշումային ջրերի բեռնաթափման եզրային օջախների տեղամասերում, այդ թվում Մեծամորի վերընթաց աղբյուրների շրջանում Այդր լճի մակարդակը իջել է 2-2,5 մետրով: Արարատյան արտեյան ավազանի կենտրոնական մասում գտնվող Գայ-Հայկաշեն քաղցրահամ ստորերկրյա ջրերի հանքավայրի հորատանցքերի ծախսի և այնպիսի մակարդակի 1981թ. և 2005թ. համեմատությամբ

յունը ցույց է տալիս, որ ջրաքանակը հորատանցքերում պակասել է 6-82լ/վրկ-ով, միջինը՝ 31,0լ/վրկ-ով, ընդհանուր համաքավայրի սահմաններում այն կազմում է 1,57մ³/վրկ, իսկ այնպեսուհուրի մակարդակը իջել է 2,48-7,48մ-ով, միջինը՝ 5,1մ-ով: Այդ գործընթացը առավել ինտենսիվ շարունակվում է նաև մերկայումս:

Վերլուծելով հարթավայրի ջրային ռեսուրսների օգտագործման արդի վիճակը հանգել ենք այն հետևության, որ Արարատյան արտեզյան ավազանի ճնշումային ջրերի մակարդակի իջեցումը ուղեկցվում է բոլոր ջրառների (հորատանցքեր, աղբյուրներ) ծախսի աստիճանական նվազումով և ակնառու վկայում է այն մասին, որ Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի հաշվեկշռում ելքի բաղադրիչները սկսում են գերազանցել մուտքի բաղադրիչներին, այսինքն՝ բնական ռեսուրսներին: Սա լուրջ մտահոգիչ փաստ է և պետք է դառնա համաժողովրդական քննարկման առաջնահերթ հիմնախնդիր:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հարթավայրի ոռոգելի հողերի մեխորատիվ վիճակը հիմնականում պայմանավորված է գրունտային ջրերի մակարդակների տեղադրման խորությամբ և բարձր հանքայնացմամբ, իսկ վերջինս կոլեկտորադրենաժային ցանցերի աշխատանքի արդյունավետությամբ և ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակով: Ներկայումս տնտեսաիռագցիոն գործոններով (կոլեկտորադրենաժային համակարգի աշխատանքի ցածր արդյունավետություն, ոռոգման ջրանցքների անբավարար տեխնիկական վիճակ, անկանոն և բարձր ոռոգման նորմաներ) և գրունտային ջրերի մակարդակի բարձր տեղադրմամբ պայմանավորված հարթավայրի 81հազ.հա ոռոգելի հողատարածքների շուրջ 23,4%-ը գտնվում է անբավարար մեխորատիվ վիճակում, որից մոտ 20,9%-ը գերխոնավացման պատճառով:

Արարատյան հարթավայրում ավելի ընդգծված է արտահայտվում ջրային ու հողային ռեսուրսների և շրջակա միջավայրի վրա բնատարածքային, բնօգտագործման և սոցիալական համակարգերի ազդեցությունը: Արդյունքում խախտվել է տարածաշրջանի բնական համակարգերի ֆունկցիոնալ էկոլոգիական հավասարակշռված վիճակը, հարթավայրում տեղի են ունեցել շրջակա միջավայրի վտանգավոր փոփոխություններ, որոնք վտանգում են մարդկանց օպտիմալ կենսապահովումը:

Հարթավայրի գեոէկոլոգիական վիճակի բարելավման նպատակով առաջարկվում է.

- ստորերկրյա ջրերի բոլոր հորատանցքերի զույգագրման իրականացում, նպատակ ունենալով պարզելու հորատանցքերի իրական թիվը, ջրառի քանակը, որակը և ջրօգտագործման ոլորտը, տեխնիկական վիճակը, նշելով լուծարման, կոնսերվացման, վերականգնման և հետագա շահագործման անհրաժեշտությունը.

- հորիզոնական բաց կոլեկտորադրենաժային համակարգերի ամենամյա լրիվ ծավալներով մաքրում և կանոնավոր շահագործում, փակ դրենաժային համակարգի վերակառուցում, շուրջ 8հազ.հա հողատարածություններում դրանց տեսակարար երկարությունների մեծացում.

- ձկնաբուծական նոր լճակների ստեղծման արգելում, գոյություն ունեցողների կրճատում, կանոնավորված շահագործում և ջրի քանակի թույլատրված սահմաններում օգտագործում, ինչպես նաև դրանց հետադարձ ջրերի հեռացման կարգավորում.

- ստորերկրյա ջրերի, հողերի մեխորատիվ վիճակի և շրջակա կենսամիջավայրի մոնիթորինգի իրականացում.

- կոլեկտորադրենաժային ցանցերի վրա անօրինական դիմադրների վերացում և դրանց տակ ընկած հողերի ոռոգման ապահովում այլ ջրաղբյուրներից.

- գյուղատնտեսական մշակաբույսերի ջրման նորմերի պահպանում և ջրման տեխնիկայի կատարելագործում.

- ոռոգման ջրանցքներից ֆիլտրացիոն կորուստների բացառում կան նվազեցում,
- թույլ ալկալիացած ոռոգելի հողերի աղազերծում լվացումով կիրառելով օրգանական նյութեր և գիպս, միջին և ուժեղ աղակալված հողերի աղազերծում կիրառելով թթու հակազդակներ (ծծմբական թթու, երկաթարջասպ և այլն); շուրջ 5հազ.հա գերխոնավացած հողատեսքերում նոր դրենաժային ցանցերի կառուցում:

Երկրորդ գլխում, համառոտ նկարագրված են Արարատյան արտեզյան ավազանի բնական պայմանները՝ բնակլիմայական, երկրաբանաջրաերկրաբանական, ջրագրական և այլն: Բնութագրված է առանձին գործոնների դերը ջրային և հողային ռեսուրսների ձևավորման գործում:

Արարատյան արտեզյան ավազանի երկրաբանական, ջրաերկրաբանական ուսումնասիրությունները սկսվել են դեռևս 1900-ական թթ.: Լայնամասշտաբ հետազոտություններ ծավալվել են անցյալ դարի առաջին կեսերին, որոնց հիմնական նպատակաուղղվածությունը եղել է ջրամեխորատիվ շինարարությունը և ջրամատակարարման ու ոռոգման նպատակներով ստորերկրյա ջրերի ընդհանուր պաշարների որոշումը:


Արարատյան արտեզյան ավազանի իրենից ներկայացնում է ստորերկրյա ջրաճնշումային համակարգ, որտեղ ստորերկրյա ջրերն ամբողջությամբ բեռնաթափվում են հարթավայրային մասում: Ջրատար հաստվածքը ներկայացված է երեք ջրատար հորիզոններով՝ գրունտային ջրատար հորիզոն, թույլ ճնշումային ջրատար հորիզոն, ուժեղ ճնշումային ջրատար հորիզոն: Ջրամերձ շերտերի տեղ-տեղ ֆացիալ փոփոխության և նրանցում այսպես կոչված «ջրաերկրաբանական պատուհաններ»-ի առկայության շնորհիվ առանձնացված ջրատար հորիզոնները ձևավորում են մեկ միասնական հիդրավիկ համակարգ:

Արարատյան արտեզյան ավազանի բնակլիմայական պայմանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոռոգելի հողագործության հետագա զարգացումը, հարթավայրի բարդ ջրաերկրաբանական պայմաններում, պահանջում է հարթավայրի ոռոգելի հողերի գիտականորեն հիմնավորված մեխորացիա, որը կհանգեցնի հողերի բերքատվության աճին, բացառելով բնատարածքային բաղադրիչների, այդ թվում նաև ժամանակակից մեխորատիվ լանդշաֆտների վրա բացասական ազդեցությունները:

Յրորող գլխում կատարված է Արարատյան հարթավայրի գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման բազմամյա ռեժիմային դիտարկումների արդյունքների վերլուծություն: Ուսումնասիրության մեթոդիկայի հիմքում դրվել են դաշտային ռեժիմային դիտարկումների և վիճակագրական մեթոդների համալիր օգտագործումը, ինչպես նաև ջրադինամիկական պրոցեսների տեսական ուսումնասիրությունները: Օգտագործվել են քարտեզագրական, երկրաֆիզիկական ժամանակակից մեթոդներ՝ ԵՏՀ տեխնոլոգիաների կիրառմամբ:

Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի ռեժիմը ձևավորվում է բնական և արհեստական գործոնների ազդեցության պայմաններում: Երկրաբանական կառուցվածքի, ջրաերկրաբանական պայմանների, երկրաձևաբանական առանձնահատկությունների և կլիմայական պայմանների բազմազանությունը պայմանավորում են ստորերկրյա ջրերի ձևավորման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց բաշխումը և վարքագիծը ժամանակի և տարածության մեջ: Հարթավայրում բնական ռեժիմի ռեգիոնալ ֆոնի վրա արհեստական գործոնների (ստորերկրյա ջրերի արտամղումները, ոռոգման ջրանցքներից ֆիլտրացիոն կորուստները, ոռոգման դաշտերից ինֆիլտրացիոն ջրերը, դրենաժային ցանցը և այլն) ազդեցությամբ ձևավորվում է առանձին տեղամասերի ստորերկրյա ջրերի խախտված ռեժիմը:


Արարատյան հարթավայրում, ստորերկրյա ջրերի դրենացման համարյա բացա-
կայության պայմաններում, գրունտային ջրերի ռեժիմը կրում է ֆիլտրացիոն-
ակունուլյատիվ բնույթ: Այդ իսկ պատճառով գրունտային ջրերի մակարդակի
խորությունը, դժվարեցված ստորերկրյա արտահոսքի և ինտենսիվ գոլորշիացման
պայմաններում, հանդես է գալիս որպես հողատարածքների մելիորատիվ վիճակը
բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը: Հետևապես, գրունտային ջրերի մակար-
դակների սեզոնային և բազմամյա դինամիկայի գնահատումը հանդիսանում է
Արարատյան հարթավայրի գերխոնավացած և աղակալված հողերի մելիորացիայի
խնդիրների լուծման նախադրյալներից մեկը:



Սկար 1. Գրունտային ջրերի մակարդակի բազմատարյա տատանումները. ա) Սասիսի (հոր. N467, գ. Ջորակ), բ) Արմավիրի (հոր. N148, գ. Վարդանաշեն), գ) Վաղարշապատի (հոր. N277, գ. Գայ, հոր. N284, գ. Սեծանոր,) տարածաշրջաններում


Վերլուծվել են 1929թ-ից մինչև 2008թ. հարթավայրում կատարված գրունտային ջրերի ռեժիմային դիտարկումների տվյալները: Նշված ժամանակահատվածում գրունտային ջրերի մակարդակի պարբերաբար բարձրացումների և իջեցումների ֆոնի վրա դիտվում է գրունտային ջրերի մակարդակի որոշակի իջեցման միտում (նկ. 1):

1992թ-ից գրունտային ջրերի մակարդակը աստիճանաբար, իսկ 1994թ-ից կտրուկ բարձրացումը պայմանավորված է հիմնականում հարթավայրի կոլեկտորադրենաժային ցանցի և ոռոգիչների տեխնիկական անբավարար վիճակով ու դրանց աշխատանքի ցածր արդյունավետությամբ: 1998թ-ից սկսած կոլեկտորադրենաժային ցանցի ամենամյա որոշ ծավալներով մաքրման արդյունքում առկա է գրունտային ջրերի մակարդակների աստիճանական իջեցում, որը կազմում է 0,3-0,6մ (նկ. 2):



Սկար 2. Արարատյան հարթավայրի գրունտային ջրերի միջին տարեկան մակարդակների փոփոխությունները բազմամյա կտրվածքում

Վերջին 80 տարիների ընթացքում՝ 1929-2008թթ. ժամանակահատվածում, Արարատյան հարթավայրում դիտվում է նաև գրունտային ջրերի հանքայնացման աստիճանի նվազման միտում (նկ. 3):



Սկար 3. Գրունտային ջրերի հանքայնացման բազմատարյա տատանումները Արարատյան հարթավայրում 1929-2008թթ. (ըստ առանձին հորատանցքերի տվյալների)

Վերջին 20 տարիների ընթացքում տարբեր հանքայնացմամբ գրունտային ջրերի զբաղեցրած մակերեսների դինամիկան ունի հետևյալ պատկերը: Եթե 1987թ. մինչև 1,0գ/լ հանքայնացմամբ գրունտային ջրերը Արարատյան հարթավայրում զբաղեցնում էին 41586հա մակերես, ապա 2007թ. այն կազմել է 66245հա: 1,0-3,0գ/լ հանքայնացմամբ գրունտային ջրերի զբաղեցրած տարածքները այդ նույն ժամանակահատվածում կրճատվել են 36850հա-ից հասնելով 14539հա-ի, իսկ բարձր հանքայնացմամբ (>3,0գ/լ) տարածքների մակերեսը կրճատվել է ավելի քան երկու անգամ՝ 1987թ-ի 320 հա-ի փոխարեն 2007թ. կազմելով 134 հա:

Վերջին տարիներին բնական գիտությունների բնագավառում լայն կիրառություն են գտել երկրատեղեկատվական համակարգերը (ԵՏՀ), որոնք

ապահովում են ինֆորմացիայի հավաքագրումը, պահպանումը, մշակումը, հասանելիությունը և տարածումը քարտեզագրական տեսքով: ԵՏՀ-ի կիրառությունը, հատկապես քարտեզագրական հետազոտման եղանակը, ջրատերկրաբանական ուսումնասիրություններում և, մասնավորապես, ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումների վերծանման, դրանց փոփոխության օրինաչափությունների գնահատման, բացասական երևույթների բացահայտման և ժամանակին կանխարգելիչ միջոցառումների մշակման գործում ունի կարևոր նշանակություն:

Քարտեզագրական հետազոտման եղանակը, ԵՏՀ տեխնոլոգիաների կիրառմամբ, հանդիսանում է Արարատյան հարթավայրում գրունտային ջրերի մակարդակների և հանքայնացման փոփոխությունը հետամտելու, մակարդակների իջեցման (բարձրացման) ընդհանուր միտումը բազմամյա կտրվածքում պարզաբանելու եղանակներից: Այն հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով որոշելու ոչ միայն տարբեր խորություններում գտնվող և տարբեր հանքայնացման գրունտային ջրերի տարածումը, այլև պատկերացում կազմել կոնկրետ տեղամասի համար գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման փոփոխության միտումների մասին, որն ունի կարևոր գործնական նշանակություն տարբեր խնդիրներ լուծելիս:


Մեր կողմից քարտեզագրումն իրականացվել է նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ArcGIS ծրագրային միջավայրում: ԵՏՀ համակարգ են մուտքագրվել և թվայնացվել 1929, 1949, 1975 և 2008թթ. հարթավայրի գրունտային ջրերի տեղադրման խորության և հանքայնացման քարտեզները, որոնցում հողատարածքների մակերեսներն առանձնացված են ըստ գրունտային ջրերի մակարդակի՝ 0-1, 1-3 և >3մ տեղադրման խորության և գրունտային ջրերի <1, 1-2 և >2 հանքայնացման: Քարտեզների մուտքագրումից, թվայնացումից և տվյալների մշակումից հետո կատարվել է նշված քարտեզների վերադրում, որի արդյունքում ստացվել են հարթավայրի գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման դինամիկայի քարտեզները:

Որպես օրինակ ստորև, համեմատության նպատակով, բերվում են քարտեզները միայն 1975 և 2008թթ.-ի համար (նկ. 4-5):


1975թ. և 2008թ. ժամանակահատվածում հարթավայրի գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման դինամիկայի քարտեզներում առանձնացվում են գրունտային ջրերի մակարդակի տեղադրման խորության և հանքայնացման փոփոխության երեք տիպի ուղղվածություն:

Ինչպես երևում է քարտեզներից, 1975-2008թթ. ժամանակահատվածում հարթավայրում գերակշռում են այն տարածքները, որոնցում գրունտային ջրերի մակարդակի տեղադրման խորությունը և հանքայնացման աստիճանը չի փոփոխվել, կամ տեղի է ունեցել մակարդակի իջեցում և հանքայնացման նվազում՝ պայմանավորված բնական և տեխնիկատնտեսական գործոններով:

Ռեժիմային դիտարկումների և ստացված քանակական տվյալների համեմատությունը հնարավորություն է տալիս հիմնավորելու ԵՏՀ տեխնոլոգիաների կիրառման հուսալիությունը ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումների տվյալների մշակման, ընդհանրացման գործում ապահովելով կիրառական խնդիրների լուծման ժամանակ այդ տվյալների օգտագործման արդյունավետությունը:




Նկար 4. Գրունտային ջրերի մակարդակի դինամիկան Արարատյան հարթավայրում 1975թ. և 2008թ.



Նկար 5. Գրունտային ջրերի հանքայնացման դինամիկան Արարատյան հարթավայրում 1975թ. և 2008թ.

Հարթավայրի հորիզոնական դրենաժների ազդման տիրույթի սահմաններում գեոֆիլտրացիոն հաշվարկային սխեման ներկայացված է հետևյալ երկու տարատեսակներով՝

- ա) միաշերտ, համեմատաբար համասեռ գրունտ (նկ. 6ա);
- բ) երկշերտ գրունտ, երբ դրենաժները տեղադրված են վերին ծածկող շերտում (նկ. 6բ):



Նկար 6. Հաշվարկային գեոֆիլտրացիոն սխեմաներ՝ ա/ միաշերտ, համեմատաբար համասեռ գրունտ, բ/ երկշերտ գրունտ՝ դրենաժը տեղադրված է վերին ծածկող շերտում

Հարթավայրում շուրջ 40-45հազ.հա ոռոգելի հողատարածքներ գտնվում են դրենաժային համակարգի ազդման տիրույթից դուրս: Նշված տարածքներում ոռոգմանը պայմանավորված գրունտային ջրերի մակարդակի փոփոխությունը գնահատելու նպատակով կատարվել է գրունտային ջրերի մակարդակի փոփոխության կանխատեսում դրենաժային համակարգի բացակայության պայմաններում վեգետացիայի ժամանակահատվածում (համաձայն Վ.Մ.Շեստակովի)՝

$$\Delta H = \frac{\varepsilon}{\mu} t [1 - f(u)], \quad f(u) = e^{-u} - uW(u), \quad u = \frac{F}{4\pi a t}$$

որտեղ t – հաշվարկային ժամանակն է (օր), ε – ինֆիլտրացիոն սնման ինտենսիվությունն է (մ/օր), μ – ջրատվության գործակիցն է, a – մակարդակահարողականության գործակիցն է (մ²/օր), F – ոռոգելի տարածքի մակերեսն է (մ²), $W(u)$ – հատուկ ֆունկցիա է, որի արժեքները վերցվում են համապատասխան աղյուսակից՝ արգումենտի հայտնի արժեքի դեպքում:

Հաշվարկման արդյունքները ցույց են տալիս, որ դրենաժային համակարգի ազդման տիրույթից դուրս գտնվող բոլոր տեղամասերում գրունտային ջրերի մակարդակի ΔH բարձրացումը հասնում է մինչև 2,5մ-ի: Նման պայմաններում գրունտային ջրերից կատարվում է ինտենսիվ գոլորշիացում, որը բերում է հողերում աղերի կուտակման և դրանց մելիորատիվ վիճակի վատթարացման:

Հիմք ընդունելով վերը նշված ֆիլտրացիոն միջավայրի գեոֆիլտրացիոն սխեմաները և միջդրենաժային հեռավորությունների որոշակի համաչափությունը՝ Արարատյան հարթավայրի բաց դրենաժային համակարգի ազդման տիրույթում ընկած հողատարածքները բաժանվել են 9 տեղամասերի, որոնցից 3-ին բնորոշ են միաշերտ գեոֆիլտրացիոն, իսկ 6-ին՝ երկշերտ գեոֆիլտրացիոն սխեմաները: Կանխատեսումային հաշվարկները կատարվել են նշված 9 տեղամասերի համար:

Ֆիլտրացիոն դիմադրությունների մեթոդով որոշվել է ոռոգելի հողատարածքներում գրունտային ջրերի մակարդակի առավելագույն բարձրացումը (h) միջդրենաժային հեռավորության մեջտեղում, հաշված նրանցում ջրի խորությունից ֆիլտրացիայի կայունացած ռեժիմի դեպքում (համաձայն Վ.Մ.Շեստակովի)

Ֆիլտրացիոն դիմադրությունների մեթոդով որոշվել է ոռոգելի հողատարածքներում գրունտային ջրերի մակարդակի առավելագույն բարձրացումը (h) միջդրենաժային հեռավորության մեջտեղում, հաշված նրանցում ջրի խորությունից ֆիլտրացիայի կայունացած ռեժիմի դեպքում (համաձայն Վ.Մ.Շեստակովի)

$$h = \frac{\varepsilon B}{T} \left(\frac{B}{8} + \Phi \right),$$

որտեղ ε – ինֆիլտրացիայի ինտենսիվությունն է (մ/օր), T – ջրատար հաստվածքի ջրահաղորդականության գործակիցն է (միաշերտ գրունտների համար՝ $T=km$, բազմաշերտ գրունտների համար՝ $T = \sum_{i=1}^n k_i m_i$, (մ²/օր), k_i և m_i – համապատասխանաբար, ջրատար շերտերի ֆիլտրացիայի գործակիցներն ու հզորություններն են (մ/օր և մ), B – միջդրենաժային հեռավորությունն է (մ), Φ – ընդհանուր ֆիլտրացիոն դիմադրությունն է՝ պայմանավորված դրենաժի հիդրոդինամիկական անկատարելիությամբ (մ), այն որոշվում է՝ կախված գեոֆիլտրացիոն սխեմայից, ֆիլտրացիոն և դրենաժային պարամետրերից:

Նույն ֆիլտրացիոն սխեմաների համար կատարվել է գրունտային ջրերի մակարդակի դիմադրական կանխատեսում վեգետացիայի ընթացքում չկայունացած ֆիլտրացիայի դեպքում միջդրենաժային հեռավորության մեջտեղում, հաշված դրենաժում ջրի մակարդակից, հետևյալ բանաձևերով՝

գրունտային ջրերի մակարդակի բարձրացման և իջեցման դեպքում՝

$$h_r = h(1 - \eta),$$

$$h_i = h_0 \cdot \eta,$$

որտեղ h_0 -ն միջդրենաժային հեռավորության մեջտեղում գրունտային ջրերի մակարդակի բարձրացումն է նրա ավարտման պահին: Գրունտային ջրերի մակարդակի իջեցման ժամանակահատվածի համար այս մեծությունը (h_0) ընդունվում է որպես ելակետային մեծություն: η -ն մակարդակի գործակիցն է, որը որոշվում է $1 - \eta = f(\bar{t})$ գրաֆիկից, որտեղ \bar{t} – հարաբերական ժամանակն է, որոշվում է՝ $\bar{t} = \frac{t}{\tau}$:

t – ֆիլտրացիայի կայունացման ժամանակի սահմաններում որոշակի քայլով ընտրված հաշվարկային ժամանակն է, τ – ֆիլտրացիայի կայունացման ժամանակն է, որը որոշվում է՝

$$\tau = \frac{\mu B(B + 8\Phi)}{4T}$$

որտեղ m -ջրատվության գործակիցն է, իսկ երկշերտ սխեմայի դեպքում, նրանց միջին մեծությունն է: Մնացած նշանակումները տե՛ս վերևում:

Նշենք, որ հաշվարկների ժամանակ կայունացման ժամանակը (τ) կախված չէ ֆիլտրացիոն գործընթացի ուղղվածությունից (գրունտային ջրերի մակարդակի բարձրացումից կամ իջեցումից): Դրա համար էլ նրա մեծությունը մնում է նույնը: Հաշվարկման արդյունքները բերված են 1-4 աղյուսակներում:

Աղյուսակ 1.

Գրունտային ջրերի մակարդակի բարձրացման դինամիկան՝ գեոֆիլտրացիոն 1-ին սխեմայի համար

Տեղամասի անվանումը	Հաշվարկային բնութագրիչներ	Ժամանակը՝ հաշված ջրման պահից, օրեր			
		20	40	60	80
գ.Քասախ - գ.Մեծամոր	f	0.24	0.47	0.71	0.94
Գրիբայեղով-Գայ-Հայկաշեն		0.46	0.93	-	-
Արմաշ-Սուրենավան		0.47	0.93	-	-
գ.Քասախ - գ.Մեծամոր	1-դ	0.54	0.75	0.86	0.92
Գրիբայեղով-Գայ-Հայկաշեն		0.74	0.92	-	-
Արմաշ-Սուրենավան		0.74	0.92	-	-
գ.Քասախ - գ.Մեծամոր	հ, մ	0.57	0.87	1.07	1.16
Գրիբայեղով-Գայ-Հայկաշեն		0.44	0.60	-	-
Արմաշ-Սուրենավան		0.40	0.54	-	-

Աղյուսակ 2.

Գրունտային ջրերի մակարդակի բարձրացման դինամիկան՝ գեոֆիլտրացիոն 2-րդ սխեմայի համար

Տեղամասի անվանումը	Հաշվարկային բնութագրիչներ	Ժամանակը՝ հաշված ջրման պահից, օրեր				
		20	40	60	80	
Հայանիստ-Սիվանիկ	f	0.39	0.77	1.15	-	
Սիս-Նորամարզ		0.39	0.78	1.18	-	
Հրազդանի ծախսափնյա կոլեկտոր-Մասիսի պ/կ		0.53	1.05	-	-	
Մասիսի պ/կ - Հրազդան-Արաքսի կոլ. I		0.49	0.98	-	-	
Հրազդան-Արաքսի կոլ. I տեղ.-գ.Ազատ		0.35	0.70	1.05	-	
Արտաշատ-Շահումյան		0.39	0.78	1.18	-	
Հայանիստ-Սիվանիկ		1-դ	0.62	0.84	0.92	-
Սիս-Նորամարզ			0.62	0.84	0.94	-
Հրազդանի ծախսափնյա կոլեկտոր-Մասիսի պ/կ			0.73	0.91	-	-
Մասիսի պ/կ - Հրազդան-Արաքսի կոլ. I			0.71	0.90	-	-
Հրազդան-Արաքսի կոլ. I տեղ.-գ.Ազատ	0.57		0.81	0.91	-	
Արտաշատ-Շահումյան	0.62		0.84	0.94	-	
Հայանիստ-Սիվանիկ	հ, մ		0.82	1.11	1.21	-
Սիս-Նորամարզ			0.81	1.10	1.23	-
Հրազդանի ծախսափնյա կոլեկտոր-Մասիսի պ/կ			0.66	0.82	-	-
Մասիսի պ/կ - Հրազդան-Արաքսի կոլ. I			0.70	0.88	-	-
Հրազդան-Արաքսի կոլ. I տեղ.-գ.Ազատ		0.77	1.09	1.23	-	
Արտաշատ-Շահումյան		0.60	0.81	0.90	-	

Աղյուսակ 3.

Գրունտային ջրերի մակարդակի իջեցման դինամիկան՝ գեոֆիլտրացիոն 1-ին սխեմայի համար

Տեղամասի անվանումը	Հաշվարկային բնութագրիչներ	Ժամանակը՝ հաշված հօ-ի իջեցման պահից, օրեր			
		20	40	60	80
գ.Քասախ - գ.Մեծամոր	f	0.24	0.47	0.71	0.94
Գրիբայեղով-Գայ-Հայկաշեն		0.46	0.93	-	-
Արմաշ-Սուրենավան		0.47	0.93	-	-
գ.Քասախ - գ.Մեծամոր	դ	0.56	0.33	0.18	0.11
Գրիբայեղով-Գայ-Հայկաշեն		0.34	0.11	-	-
Արմաշ-Սուրենավան		0.34	0.11	-	-
գ.Քասախ - գ.Մեծամոր	հ, մ	0.65	0.38	0.21	0.13
Գրիբայեղով-Գայ-Հայկաշեն		0.22	0.07	-	-
Արմաշ-Սուրենավան		0.20	0.07	-	-

Աղյուսակ 4.

Գրունտային ջրերի մակարդակի իջեցման դինամիկան՝ գեոֆիլտրացիոն 2-րդ սխեմայի համար

Տեղամասի անվանումը	Հաշվարկային բնութագրիչներ	Ժամանակը՝ հաշված հօ-ի իջեցման պահից, օրեր				
		20	40	60	80	
Հայանիստ-Սիվանիկ	f	0.39	0.77	1.15	-	
Սիս-Նորամարզ		0.39	0.78	1.18	-	
Հրազդանի ծախսափնյա կոլեկտոր-Մասիսի պ/կ		0.53	1.05	-	-	
Մասիսի պ/կ - Հրազդան-Արաքսի կոլ. I		0.49	0.98	-	-	
Հրազդան-Արաքսի կոլ. I տեղ.-գ.Ազատ		0.35	0.70	1.05	-	
Արտաշատ-Շահումյան		0.39	0.78	1.18	-	
